8 օգոստոսի 2018 թվականի N 1060 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1551-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգի 5-րդ կետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2018 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 1551-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 1-3-րդ և 20-23-րդ կետերը.

2) որոշման հավելվածը 46-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ կետերով.

«				
	ՀՀ արդարադատության նախարարություն			
47.	ՀՀ կառավարություն	ՀՀ արդարադատության նախարարություն	ՀՀ պետական բյուջեի ծախսերի իրականացմանն ուղղված գործունեության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ճշտության ստուգում	2015-2017 թթ. և 2018 թ. հաշվետու ժամանակաշրջան
48.	ՀՀ արդարա-	«Արդարա-	ՀՀ պետական բյուջեից, հանրապետական	2015-2017 թթ. և

	դատության նախարարություն	դատության ակադեմիա» ՊՈԱԿ	նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից գումարների հատկացման և ծախսման ճշտության ստուգում	2018 թ. հաշվետու ժամանակաշրջան
49.	ՀՀ արդարադատության նախարարություն	Քրեակատարողական ծառայություն	ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից գումարների հատկացման և ծախսման ճշտության ստուգում	2015-2017 թթ. և 2018 թ. հաշվետու ժամանակաշրջան
ՀՀ Լոռու մարզ				
50.		Վանաձորի քաղաքապետարան	ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվարկման համար ներկայացվող տվյալների արժանահավատության, ՀՀ պետական բյուջեից տրված նպատակային հատկացումների օգտագործման և ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության ստուգում	2015-2017 թթ. և 2018 թ. հաշվետու ժամանակաշրջան
ՀՀ Արարատի մարզ				
51.	ՀՀ կառավարություն	Արարատի մարզպետարան	ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության, ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից հատկացված միջոցների հաշվին նախատեսված ծախսերի կատարման իսկության, նպատակայնության և արդյունավետության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ստուգում	2015-2017 թթ. և 2018 թ. հաշվետու ժամանակաշրջան
52.		Արտաշատի քաղաքապետարան	ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվարկման համար ներկայացվող տվյալների արժանահավատության, ՀՀ պետական բյուջեից տրված նպատակային հատկացումների օգտագործման և ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության ստուգում	2015-2017 թթ. և 2018 թ. հաշվետու ժամանակաշրջան
ՀՀ Շիրակի մարզ				
53.	Շիրակի մարզպետա-	«Գյումրու բժշկական	ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսման նպատակայնության	2015-2017 թթ. և 2018 թ. հաշվետու

	ման	կենտրոն» ՓԲԸ	և հիմնավորվածության, գնումների գործընթացի ճշտության և օրինականության, պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին համապատասխանող շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման ճշտության ստուգում	ժամանակաշրջան

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. օգոստոսի 8
Երևան